ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«18» մարտի 2019 թվականի № 56-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2014 թվականի հունիսի 25-ի թիվ 81-Ա հրամանը և «ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերության 2019 թվականի մարտի 11-ի թիվ 005/2019 գրությունը.

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հարուցել վարչական վարույթ «ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքը քննարկելու նպատակով:

2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝

1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.

2) վարչական վարույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին:

3/18/2019

X

VERIFIED OCSP 3/18/2019 19:42:38 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533